

3403



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

« 27 » 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 032 - 24

Ձեռնարկող՝

«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ
Քաղաք Երևան, Նիկողայոս Ադոնցի 8/170

Գործունեությունը՝

Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող Արհեստական ձնագոյացման համակարգի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 032 - 24

«27» Տարբերի 2024թ.

Արհեստական ձնագոյացման համակարգի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «Մայլեռ Մաունթեյն Ռեզորթ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝ Արագածոտնի մարզ, Եղիպատրուշ,
բնակավայր

Ներածական մաս. «Մայլեռ Մաունթեյն Ռեզորթ» ՓԲ ընկերությունը նախատեսում է լեռնադահուկային ուղիների կահավորման համար կառուցել արհեստական ձնագոյացման համակարգ «Մայլեռ» ծրագրի շրջանակում:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել 2021 թվականի հուլիսի 29-ի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «Մայլեռ» ներդրումային ծրագրին հավանություն տալու և

2021 թվականի հոկտեմբերի 7-ի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին N1661-Ա որոշումները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6)-րդ կետի դ. ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արհեստական ձնագոյացման համակարգը նախատեսվում է տեղակայել Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում: Գործունեության տարածքի հեռավորությունը Եղիպատրուշ գյուղից ուղիղ գծով կազմում է 2000 մ, Ջրամբար գյուղից 3500 մ, Ապարանի ջրամբարից հեռավորությունը 1900 մ է:

Նախատեսվում է համակարգը տեղակայել սահուղիների երկայնքով: Ձնագոյացման գծի ընդհանուր երկարությունը կազմում է 16536 գծամետր: Սահուղիների համար ապահովվելու է



40 սմ հաստության ձնածածկույթ, խրամուղին ունենալու է 2X2մ չափսեր: Ընդհանուր մակերեսը կազմում է 34 հազ. մ²:

Արհեստական ձնագոյացման համակարգը կազմված է լինելու երկու պոմպակայանից, ջրամատակարարման համակարգից, հորերից և արհեստական ձնագոյացման պերիֆերիկ սարքերից՝ նիզակներից և թնդանոթներից:

Նախատեսվող արհեստական ձնագոյացման համակարգը տեղակայվելու է սահուղիների երկայնքով, առկա գրունտային ճանապարհների եզրագծով, զուգահեռ 2 փուլով: Սահուղիների համար ապահովվելու է 40 սմ հաստության ձնածածկույթ: Ձնագոյացման գծի ընդհանուր երկարությունը կազմելու է 16536 գծամետր, խրամուղին ունենալու է 2X2մ չափսեր: Ընդհանուր մակերեսը կազմելու է 34 հազ մ²:

Արհեստական ձնագոյացման համակարգը կազմված է լինելու երկու պոմպակայանից, ջրամատակարարման համակարգից, հորերից և արհեստական ձնագոյացման պերիֆերիկ սարքերից՝ նիզակներից և թնդանոթներից:

Լեռնադահուկային համալիրը կունենա տարբեր բարդության 100 գծանշված սահուղի՝ մոտ 100 կմ երկարությամբ և 334 հա դահուկասահքի համար մշակված մակերեսով տարածքում, ինչպես նաև գծանշված տարածքից դուրս ազատ սահելու հավելյալ տարածք: Սահուղիներն ունեն 972 մ անկում՝ ծովի մակերևույթից 2850-1878 մետր: Սահուղիների ամբողջությամբ արհեստական ձնով ծածկման ժամանակն ըստ տեխնիկական պահանջի 70 ժամ է, իսկ սահուղիների ձնածածկի հաստությունը պետք է լինի 40 սմ և ըստ տեխնիկական նորմերի յուրաքանչյուր 1տ(1.01մ³) ջրի կիրառման դեպքում կգոյանա 2.2մ³ ձյուն:

Ձնագոյացման գծի բոլոր բաղկացուցիչ մասերը՝ խողովակներն ու մալուխները, խրամուղիներով մուտք են գործելու ձնագոյացման նիզակների և հրանոթների համար նախատեսված հորեր: Բոլոր միացումներն իրականացնելուց հետո հորերը պատրաստ կլինեն ձնագոյացման նիզակների և հրանոթների տեղադրման համար: Նախատեսվում է 156 հոր, որոնցից յուրաքանչյուրն ունի 1.8մ խորություն, և 2մx2մ չափսեր: Ձյան արտադրությունն իրականացվելու է շարժական թնդանոթների և նիզակների միջոցով: Ջուրը հորերից բարձր ճնշման տակ -4°C և ավելի ցածր ջերմաստիճաններում կվերափոխվի ձյան և նիզակներից ու թնդանոթներից դուրս կմղվի ձյան տեսքով: «Demacenco» ընկերության կողմից մատակարարվելու է 82 ձյան թնդանոթ և 40 նիզակ:

Լեռնադահուկային համալիրի սահուղիների ձնագոյացման համար ջրածախսը ներառում է միայն սահուղիների ձնածածկի ստեղծման համար արդյունաբերական (տեխնիկական) կարիքների համար ջրօգտագործումը: Ջրառն իրականացվելու է Ապարանի ջրամբարից՝ 2 փուլով: Առաջին փուլ՝ նոյեմբեր ամսին, մեկ անգամ 70 ժամ տևողությամբ, երկրորդ փուլ՝ դեկտեմբեր ամսին, մեկ անգամ՝ 70 ժամ տևողությամբ (համաձայն 2022 թվականի դեկտեմբերի 12-ին տրված N 0271-22 գործող ջրօգտագործման թույլտվության): Ջրօգտագործման ծավալը կազմում է 203.75 հազ. մ³/տարի, կամ 404.3լ/վ: Ջուրը երկու հատ՝ 250 մմ տրամագծով, 115 մ երկարությամբ ստորգետնյա խողովակների անցկացման միջոցով հասնելու է մինչև առաջին պոմպակայան:

Ջրառի գործընթացից հետո ջուրը մտնելու է հիմնական պոմպակայան: Օգտագործվելու է 2 պոմպակայան, ներքևի պոմպակայան՝ 28.6x19.9x5.3 չափսերով, ընդհանուր 569.1 մ² մակերեսով և վերևի պոմպակայան՝ 21.5x10.0x3.6 չափսերով, ընդհանուր՝ 169.7 մ² մակերեսով: Պոմպակայանները համալրված կլինեն հովացման համակարգով, կոմպրեսորներով, կառավարման համակարգով:



Ջուրը բարձր ճնշման տակ պոմպակայանից ուղղվելու է դեպի սահուղիներ: Սահուղիների երկայնքով ջրի, օդի խողովակները և հոսանքի ու օպտիկայի մալուխներն անցնելու են ստորգետնյա խրամուղիներով:

PS000-ին պոմպակայանը կտեղադրվի Ապարանի ջրամբարի մոտ (ծովի մակարդակից 1845 մ բարձրության վրա): Այս պոմպակայանում ջուրը ֆիլտրի (750մ³/ժ) միջոցով կենթարկվի առաջին մշակման և կմղվի դեպի PS200 պոմպակայան:

PS200 պոմպակայանը կտեղակայվի ծովի մակարդակից 2400մ բարձրության վրա: Այս պոմպակայանում ջուրը հովացման աշտարակների միջոցով կենթարկվի երկրորդ մշակման, որից հետո ռեգերվուարից վերցրած ջրի ջերմաստիճանը 7°C-ից կդառնա 2°C: Այս ջերմաստիճանն անհրաժեշտ է լավ որակի ձյան գոյացման համար: Այս մշակումից հետո ջուրը խողովակաշարով կմղվի հորեր: Ձնագոյացումը բացառապես իրականացվելու է պոմպերի և կոմպրեսորների միջոցով, առանց որևէ հավելանյութերի: Ոռոգման որակի ջուրը ֆիլտրվելու է, դառնալով ավելի լավ որակի ջուր: Արհեստական ձնագոյացման համակարգն աշխատանքային ռեժիմի կանցնի -4°C և ցածր ջերմային ֆոնի ժամանակ: Ավելի տաք ջերմային ֆոնի դեպքում համակարգը չի օգտագործվի:

Լեռնադահուկային համալիրի շահագործման սեզոնի ավարտից հետո ձնագոյացման համար կիրառված ջուրը կմտնի բնական շրջանառության ցիկլ (ձնից ջուր): Ջրահեռացման որևէ համակարգ, կամ ուղղորդված ջրահեռացում չի իրականացվելու:

Լեռնադահուկային համալիրի տարեկան ջրահեռացումը կկազմի ընդամենը 203750 մ³/տարի: Ջրագծի խողովակների անցկացման, պոմպակայանների կառուցման, ձնագոյացման գծի սարքավորումների տեղադրման համար կատարվելու է մոտ 66150մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող հողային զանգվածը ժամանակավորապես կտեղադրվի խրամուղու երկայնքով, հետլիցքի նպատակով:

Ըստ հայտում եղած տեղեկատվության՝ նախատեսվող գործունեության ազդման տարածքում չկան պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ:

Փորձաքննական գործընթացում հայցվող տարածքում դիտարկվել են Կարմիր գրքում գրանցված տեսակներ, որոնց համար օրենքով սահմանված կարգով հայտում նախատեսվել են հատուկ միջոցառումներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Շինարարության արդյունքում գոյացող թափոնները նախատեսվում է տարանջատել ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվելու են հատկացված աղբավայր:

-Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից:

-Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:

-Հեղուկ նյութերը նախատեսվում է տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

-Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ:

Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերվի առաջին բուժօգնություն:



-Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքի տեսակների հայտնաբերման դեպքում պետք է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

-Հողային աշխատանքները կատարվելու են հատուկ մշակված ժամանակացույցով, ինչը թույլ կտա կանխել հողային աշխատանքները կենդանիների ծմեռման և վերարտադրության ընթացքում:

-Խստորեն վերահսկել բուսականության մաքրման աշխատանքները /եթե առկա են/ ազդեցությունները կանխելու համար:

-Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, մակնշվեն և ցանկապատվեն: Արմատային համակարգը պետք է պաշտպանվի և բացառվի ծառերին վնաս հասցնելը:

-Իրականացվելու է փոշու քանակի ամսական չափում գործիքային չափման միջոցով:

-Փորման աշխատանքների իրականացման ժամանակ կիրառվելու են փոշենստեցման միջոցառումներ:

-Իրականացվելու են աղմուկի մակարդակի պարբերաբար չափումներ:

-Հողի բերրի շերտի հանումն ու պահպանումն իրականացվելու է ՀՀ օրենսդրության կարգավորումներին համապատասխան: Ավելցուկային հողահանույթը պատշաճ պահպանելուց հետո օգտագործվելու է հետագայում տարածքների վերականգնման համար:

-Փոշու տարածումը կանխելու համար սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով:

-Շինարարական մեքենաներն ու սարքավորումները պետք է լվացվեն հատուկ այդ նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում:

-Բացառվելու է շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօդյա այրումը:

-Նյութերն ու թափոնները պետք է տեղափոխվեն ծածկված թափք ունեցող բեռնատարներով:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ, բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող Արհեստական ձնագոյացման համակարգի կառուցման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատառելու



մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 7-ի N781-Ն, «Հայաստանի հանրապետության կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն, 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն «Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին» որոշումների պահանջներով:

-Պետական անտառներում և անտառային հողերում անտառօգտագործման յուրաքանչյուր փուլից առաջ գործողությունները նախապես համաձայնեցնել պետական կառավարման լիազորված մարմնի, այդ թվում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ:

-Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

-Աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

-Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

-Անհրաժեշտ է Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:

-Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակահատվածում անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:

- Աշխատանքների իրականացման ժամանակ՝ անհրաժեշտ է համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել հողային աշխատանքների իրականացման ընթացքում արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում Արհեստական ձնագոյացման համակարգի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

